ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 **թվականի բյուջեի ձևավորումը**

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության ծրագրի կատարումն ապահովելու նպատակով կարգավորող մարմնի այդ տարվա բյուջեն կձևավորվի «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն: Մասնավորապես, հանձնաժողովին հատկացվող պահպանման ծախսերի տարեկան մեծությունը ձևավորվում է «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքի համաձայն ձևավորված հանձնաժողովի աշխատավարձի տարեկան ֆոնդը բազմապատկելով 1.75 գործակցով: «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքը սահմանում է, որ հանձնաժողովի պահպանման ծախսերի տարեկան մեծության և աշխատավարձի տարեկան ֆոնդի տարբերությունն ուղղվում է հանձնաժողովի պահպանման, տեխնիկական հագեցվածության, հանձնաժողովի անդամների և աշխատողների նյութական խրախուսման և զարգացման, սոցիալական ծրագրի իրականացման և այլ ֆոնդերին, իսկ բյուջեի 1%-ի չափով հաշվարկված գումարն ուղղվում է հանրային ծառայությունների կարգավորվող ոլորտում սպառողների շահերը պաշտպանող, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան գրանցված հասարակական կազմակերպություններին՝ կարողությունների զարգացման և նրանց անդամների մասնագիտական գիտելիքների կատարելագործման նպատակով:

Ծրագրի անվանումը՝ **հանրային ծառայությունների ոլորտի կարգավորում** Ծրագրի շրջանակում իրականացվող միջոցառման անվանումը՝	
1. **Հանրային ծառայությունների ոլորտում կարգավորման իրականացում**	Գումարը (հազ.դրամ)
Ընթացիկ ծախսեր, այդ թվում՝	834569.3
Աշխատանքի վարձատրության գծով ծախսեր	660206.1
Ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերման, ներքին և արտասահման գործուղումների , դրամաշնորհների, նպաստների, հարկերի և պարտադիր վճարների համար նախատեսված ծախսեր	174363.2
2. **ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի տեխնիկական հագեցվածության բարելավում**	
Ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսեր, այդ թվում՝	17983.7
Տրանսպորտային սարքավորումներ	15000.0
Վարչական սարքավորումներ	2983.7
Ընդամենը ծախսեր	852553.0